

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre



ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբեր

2022թ.

Յ Գորիս Ջ

29.12.2022 թ.

ՏԱՐԵՎԵՐՁՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանն այսօր մարզպետարանի աշխատակիցների հետ տարեվերջյան աշխատանքային խորհրդակցություն է անցկացրել:

Մարզի ղեկավարն ամփոփել է անցած տարում մարզպետարանի գործունեությունը, որը տարբեր հանգամանքներով պայմանավորված՝ հաճախ եղել է արտակարգ իրավիճակներում, ու ոչ միշտ է հաջողվել աշխատել նախապես ծրագրած օրակարգով:


Ռոբերտ Ղուկասյանը գնահատականներ էլ է հնչեցրել ու շնորհակալություն հայտնել մարզպետարանի ղեկավար կազմին և բոլոր աշխատակիցներին՝ կատարած աշխատանքի համար:

Մարզպետը ներկայացրել է նաև կառույցի նոր մասնագետներին ու հաջողություն մաղթել աշխատանքում:

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/12/29/xorhrdakutyun_29_in/


29.12.2022 թ.

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԿԱՊԱՆԻ ՔՈՒՅՐ ՔԱՂԱՔ ԳԼԵՆԴԵԼԻ՝ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԷԼԵՆ ԱՍՍՏՐՅԱՆԻՆ

 Դեկտեմբերի 28-ին Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը ընդունել է Գլենդելի քաղաքային խորհրդի անդամ Էլեն Ասատրյանին: Այցի գլխավոր նպատակը քույր քաղաքներ՝ Կապանի և Գլենդելի միջև համագործակցության վերականգնումն ու խորացումն էր:

Ողջունելով հյուրին Կապանում՝ համայնքի ղեկավարը նախ նշել է, որ քույր քաղաքների բարեկամությունը տարիների պատմություն ունի, և այն ամրագրվել է դեռևս 2002 թվականի դեկտեմբերի 17-ին կնքված հուշագրով, որին հաջորդել են երկու քաղաքների ղեկավարների մի շարք հանդիպումներ, պատվիրակությունների փոխայցելություններ և իրականացված բազմաթիվ ծրագրեր: Գևորգ Փարսյանը բարձր է գնահատել տևական դադարից հետո երկկողմ հարաբերությունների վերսկսմանն ուղղված ջանքերը, ներկայացրել համայնքի տարբեր ոլորտներում իրականացվող աշխատանքները, առկա խնդիրներն ու կարիքները: Համայնքի ղեկավարը անդրադարձ է կատարել նաև պատերազմից հետո համայնքի առջև ծառայած մարտահրավերներին, կենսական բնույթի խնդիրներին, ինչպես նաև Արցախի շրջափակմանը, և այս համատեքստում կարևորել Սփյուռքի ներուժի օգտագործումը՝ միջազգային հանրությանը օբյեկտիվ տեղեկություններ փոխանցելու հարցում:

Էլեն Ասատրյանը իր հերթին շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար՝ կարևորելով երկու քաղաքների միջև առկա հարաբերությունները թղթի վրայից գործնական դաշտ տեղափոխելու անհրաժեշտությունը: Նա նաև նշել է, որ այցի բուն նպատակը, տեղում իրավիճակին ծանոթանալը և կարիքները գնահատելն է և, ըստ այդմ, առարկայական գործողությունների հստակ օրակարգ կազմելը:

 Երկուստեք պայմանավորվածություն է ձեռք բերվել պահպանել կապը և մշակել հստակ ծրագրերի օրակարգ՝ առաջիկայում իրագործելու նպատակով:

Հանդիպման ավարտին կողմերը փոխանակվել են խորհրդանշական նվերներով:

📌 Կապան կատարած այցի շրջանակներում, Գևորգ Փարսյանի ուղեկցությամբ, Էլեն Աստարյանը եղել է նաև Բաղաբուրջի հուշահամալիրում, հարգանքի տուրք մատուցել հայրենիքի պաշտպանության ընթացքում հերոսացած հայորդիների հիշատակին և ծաղիկներ խոնարհել նրանց շիրիմներին:

📌 Ճանաչողական այցելություններ են եղել Շմավոն Սովսիսյանի անվան պատմության և Արվեստի թանգարաններ, թիվ 3 միջնակարգ դպրոց, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց և Վահանավանք վանական համալիր:

📌 Գլենդելի խորհրդային անդամը հնարավորություն է ունեցել նաև հանդիպելու և զրուցելու համայնքի կրթության և մշակույթի բնագավառի ներկայացուցիչներին՝ քննարկել ոլորտում առկա խնդիրները, համագործակցության հնարավոր եզրերը, ուղիներն ու հեռանկարները:

📌 Օրվա ավարտին՝ հատուկ հյուրի համար, Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնում կազմակերպվել էր «Մեծապատիվ մուրացկաններ» ներկայացումը:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Kapanmunicipality/posts/1945586164482624>

29.12.2022 թ.

«Թուրքի աչքը պիտի հանենք և մեր տների լույսը վառ պահենք». հայտարարում են թշնամական աքցանի մեջ հայտնված Ներքին Հանդի կանայք

Դեկտեմբերի 27-ին Ներքին Հանդում էինք...

Այնտեղ, ինչպես սաել ենք քանիցս, միանգամայն նոր իրավիճակ է սեպտեմբերի 13-15-ի եռօրյա պատերազմից հետո...

Գյուղի ամբողջ մերձակայքը՝ բարձունքներով, ռազմականացված մեծ պլացդարմ է դարձել՝ ակնհայտորեն երևացող անթիվ-անհամար ճանապարհներով, մարտական դիրքերով...

Եվ այնքան խիտ են ճանապարհներն ու հենակետերը, որ տարածքին անձանոթները դժվարությամբ կկողմնորոշվեն՝ որտեղ են մերոնք, որտեղ՝ թուրքերը...

Անսովոր և անօրինակ այս «խճանկարը» հանգամանալից դիտարկելուց հետո անհնար էր չնկատել, թե որքան մեծ աշխատանք է կատարվել մեր դիրքերի ամրակայման, հզորացման ուղղությամբ, ինչը հույսի շող է արթնացնում մեր մեջ:

Եվ, այդուհանդերձ, շփման գծից երբեմն-երբեմն կրակոցներ են լսվում, բայց գյուղը չլքած բնակիչների համար դրանք այլևս սովորական են դարձել ու սարսափ չեն ներշնչում...

- Կրակոցներ միշտ էլ լինելու են. մենք էլ մեր գյուղում, մեր տներում ապրելով, գյուղի երբեմնի առօրյան վերականգնել փորձելով պետք է պատասխան տանք թշնամուն, գյուղում ապրելով ու արարելով ցույց տանք, որ կանք ու լինելու ենք, - ստեղծված իրավիճակին դիմակայելու նման բանաձև է առաջարկում Լուսինե Բաբայանը՝ Ներքին Հանդի վարչակազմի օպերատորը:

Զրուցակիցս այնուհետև հավելում է. «Նոր տարին անպայման գյուղում ենք նշելու, իհարկե, տոնաձառ զարդարելու սիրտ չունենք, քանզի ավարտվող տարում այս հողը կրկին

մեր հերոս տղաների արյամբ է շաղախվել, բայց տոնական սեղան պատրաստելու ենք, գյուղի լույսերն ենք վառելու՝ վերստին ցույց տալու, որ Ներքին Հանդն աննվաճ է»:

Ռազմիկ Բաղդասարյանը, Գագիկ Բաղայանը և մյուս համագյուղացիները համաձայն են ապրելու այդ բանաձևին:

Համեստ Հայրապետյանը ոչ պակաս վճռական է. «Թուրքի աչքը պիտի հանենք և մեր տների լույսը վառ պահենք»:

Տիկին Համեստի խոսքերին միգուցե առանձնահատուկ նշանակություն չտայինք, եթե չիմանայինք, որ ամուսինը մահացել է 2022-ի սեպտեմբերյան պատերազմից առաջ, սակայն գերեզմանի տարածքը թուրքի կողմից զավթված լինելու պատճառով ոչ միայն չի կարողացել նրա քառասունքը նշել, այլև չորս ամիս շարունակ չի կարողանում այցելել ամուսնու շիրմին:

Ի դեպ, տղամարդկանց մեծ մասը գյուղում է, կանանց մի մասը՝ նույնպես, ոմանք գնում-գալիս են: Գյուղի վեց դպրոցականներն էլ, որ ուսումը շարունակում են Ծավում, նույնպես գնում-գալիս են...

Հայրենի բնօրրանին մինչև վերջ տեր կանգնելու հանդեցիների վճռականությունը ստիպում է նրանց՝ տիրոջ սրտացավությամբ ու հետևողականությամբ բարձրացնել գյուղի հիմնախնդիրները, որ բազմապատկվել են սեպտեմբերյան պատերազմից հետո:

Մարդիկ զարմանք են հայտնում. մի՞թե հնարավոր չէ գյուղի մերձակայքում տեղաբաշխված ՌԴ զինվորականների օգնությամբ հումանիտար միջանցքի պես մի ճանապարհ բացել գյուղի գերեզման գնալ-գալու համար:

Խմելու ջրի խնդիրը... Բոլորը՝ ամենավերևից մինչև ամենաներքն, տեղյակ են խնդրին, բայց... Բնակիչները շարունակում են խմելու ջուր վերցնել Բասուտա գետից: Ու զարմացած հարցնում են՝ մի՞թե հնարավոր չէր սեպտեմբերից մինչև հիմա շատ թե քիչ կարգավորել այդ խնդիրը:

Գյուղում ցավ են ապրում, որ հին գյուղի եկեղեցու մոտ, նաև Մեծ հայրենականում գոհված հանդեցիների հիշատակը հավերժացնող հուշարձանի կողքին ադրբեջանցիները մարտական դիրքեր են կառուցել:

Ցավ են ապրում, որ գյուղի արոտները հիմնականում բռնազավթված են և առայժմ անասնապահությամբ զբաղվելու հնար չունեն:

Վանո Մելքոնյանն էլ, որի 80-ամյակը լրանում է մի քանի օր հետո՝ հունվարի 1-ին, ցավ է ապրում. «Թուրքերը եկան մեր դիմացի բարձունքները գրավեցին, ճանապարհներ կառուցեցին, հիմա էլ խճապատում են այդ ճանապարհները, դիրքեր և խրամատներ են կառուցում... Պետք է ամեն ինչ անել, որ գյուղի՝ մինչև սեպտեմբերյան պատերազմ ունեցած առօրյան գոնե մասնակիորեն վերականգնվի, այլապես Ներքին Հանդը «խարաբա» է դառնալու»:

Կյանքի ութ տասնամյակում շատ բան տեսած ու փորձություններով անցած Վանո Մելքոնյանը չի թաքցնում իր մտածումները՝ «Թուրքի հետ միայն ուժով պիտի խոսել, թուրքն ուրիշ լեզու չի հասկանում»:

Մի երևույթ էլ, որ ցավով նկատեցինք՝ սահմանապահ գյուղերում այնքան էլ ոգևորված չեն ռուս զինյալների ներկայությամբ, որոնց հենակետերը կարծեք շատացել են վերջին շրջանում:

Փոխարենը նկատելի են այն մեծ հարգանքն ու պատկառանքը, որ տաճում են հայոց քանակի զինվորականների ու մեր կամավորականների հանդեպ:

Ահա այսպիսի տրամադրություններ են թևածում Ներքին Հանդում՝ Ամանորից և Սուրբ Ծննդից առաջ:

Մեր նախատոնական շրջագայությունը կիսատ կլիներ, եթե չայցելեինք Սոսիների պուրակ, չվայելեինք Բասուտա գետի խորհրդավոր լռությունը...

Հետո հաճույքով հյուրընկալվեցինք Գագիկ Բաղայանի օջախում և միմյանց շնորհավորեցինք գալիք տոների կապակցությամբ՝ երազելով այն օրը, երբ Սյունիք ներխուժած թշնամին կշարտվի հայոց սահմաններից դուրս:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/turqi-achqy-piti-haneng-ev-mer-tneri-luysy-var-paheng-haytararum-en-tshnamakan-aqtsani-mej-haytnvats-nerqin-handi-kanayq>

26.12.2022 թ.

ՍՈՒԲՎԵՆՏԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎԱՐՏ՝ ԳՈՐԻՍՈՒՄ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը դեկտեմբերի 25-ին Գորիսում համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի հետ մասնակցել է պետություն-համայնք համաներդրմամբ իրականացված (2021թ.սկսված) երկու սուբվենցիոն ծրագրի արդյունքում կառուցված օբյեկտների բացման արարողությանը:

Գորիսից դեպի Ակներ բնակավայր տանող մոտեցման երկրորդ գլխավոր ճանապարհի հիմնանորոգում. ծրագրի ընդհանուր արժեքը՝ 225 մլն 239 հազ դրամ, որից ՀՀ պետությունից մասնաբաժինը՝ 101 մլն 398 հազ դրամ, համայնքինը՝ 123 մլն 931 հազ դրամ:

Մաշտոցի փողոցի 230մ հատվածի և Դիտակետի ճեմուղու 450մ հատվածի սաֆալտապատում. ընդհանուր արժեքը՝ 85 451 000 դրամ, որից պետությունից ներդրումը՝ 38 մլն 453 հազ դրամ, համայնքինը՝ 46 մլն 998 հազ դրամ:

Գորիսում երեկ տարբեր դոնորների ու համայնքապետարանի ներդրման շնորհիվ բացվել են նաև խաղահրապարակ ու Վերիշենի հիմնանորոգված մանկապարտեզը:

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/12/26/Goris_subvencia_2021/

25.12.2022 թ.

ՄԱՐԶՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԳՈՐԻՍՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԱՐՑԱՆՑԻՆԵՐԻՆ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանն այսօր հերթական անգամ հանդիպել է Արցախի մեկնելու անհնարինության պատճառով Գորիսում ժամանակավորապես բնակվող արցախցիներին:

Մարզպետը խոսել է նրանց հետ կացարանների պայմանների ու կենցաղի կազմակերպման մասին, հետաքրքրվել խնդիրներով ու հոգսերով, լսել նրանց մտահոգությունները:

Ռոբերտ Ղուկասյանը կրկին վստահեցրել է, որ Սյունիքի մարզպետարանն իրենց կողքին է ու պատրաստ՝ արձագանքելու ծագած խնդիրների լուծմանը, աջակցելու ինչով հնարավոր է՝ դժվարություններին միասին դիմագրավելու համար...

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/12/25/handipum_arcaxcineri_het/

23.12.2022 թ.

ՄԱՐԶՊԵՏԸ ՀԱՆՐԻՊԵԼ Է ԻԻՀ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՄԻՆ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանն այսօր ընդունել է ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամինին:

Մարզպետը ողջունել ու կարևորել է Կապանում ԻԻՀ հյուպատոսության բացումը՝ նշելով, որ այն դրականորեն են ընդունել նաև Սյունիքի բնակիչները:

Մորթեզա Աբեդին Վարամինը ներկայացրել է ն՝ ՀՀ-ում, ն՝ Իրանում մինչ այժմ ունեցած հանդիպումները, նախնական պայմանավորվածությունները, իրականացրած աշխատանքը, որոնք արդեն հետագա փոխգործակցության, միասնական նախաձեռնությունների, համատեղ գաղափարների ու ծրագրերի իրականացման հիմք պիտի դառնան:

Մարզպետն ու հյուպատոսը քննարկել են Սյունիքի և ԻԻՀ միջև տարբեր ոլորտներում հնարավոր համագործակցությանն առնչվող թեմաներ, նաև դիտարկել այն ոլորտները, որոնք երկու կողմերին էլ հետաքրքրում են ու կարող են փոխշահավետ լինել:

Ռոբերտ Ղուկասյանը փոխանցեց Կապանում ԻԻՀ հյուպատոսարանի հետ սերտ համագործակցության ու անհրաժեշտության դեպքում նրա գործունեությանն աջակցելու՝ մարզային իշխանության պատրաստակամությունը:

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/12/23/handipum_III_Hyupatos/

21.12.2022 թ.

Ժաննա Անդրեասյանը Գորիսի թատրոնում հանդիպել է Բերձորի ճանապարհի փակման հետևանքով Հայաստանում մնացած արցախցի երեխաներին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն այսօր այցելել է ՀՀ Սյունիքի մարզ: Նախարարը Գորիսի պետական դրամատիկական թատրոնում հանդիպել է Հայաստան-Արցախ ճանապարհի փակման հետևանքով Հայաստանում գտնվող դպրոցահասակ երեխաներին:

Թատրոնում երեխաների համար կազմակերպված ամանորյա ներկայացումից առաջ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը զրուցել է նրանց հետ, նվիրել գրքեր:

«Այսօրվա մեր ուժեղ լինելուց են կախված մեր հայրենիքի ապագան, մեր հետագա զարգացումը: Այստեղ գտնվող երեխաներից և մեծահասակներից յուրաքանչյուրը մեր հզորության գրավականն է: Դուք ձեր տոկունությամբ և մարդկային շատ բարձր որակներով ցույց եք տալիս դժվարությունները հաղթահարելու ճանապարհը: Իսկապես, շատ դժվար օրեր ենք ապրում. այն վիճակը, որում հայտնվել են Արցախում գտնվող մեր հայրենակիցները, այլ կերպ, քան հումանիտար աղետ, հնարավոր չէ բնութագրել: Պատկերացնում եմ, թե որքան դժվար է նաև այստեղ գտնվողների համար, որոնք հնարավորություն չունեն վերադառնալու ընտանիք և տուն: Անկախ նրանից՝ ինչով ենք զբաղվում՝ բոլորիս մտքում այս օրերին այդ նույն հարցն է՝ երբ է բացվելու Արցախ-Հայաստան ճանապարհը: Կյանքի ճանապարհը պետք է բույս առաջ բացվի, և ստեղծված հումանիտար աղետին վերջ տրվի: Բայց մենք նաև զիտակցում ենք, որ իրավունք չունենք ուժեղ չլինել», - նշել է Ժաննա Անդրեասյանը:

Նախարարը հորդորել է ճանապարհի փակման հետևանքով կրթությունն ընդհատած երեխաներին հաճախել տեղի դպրոցներ:

«Հայաստանյան բոլոր դպրոցների դռները բաց են ձեռք համար. հաճախեք մոտակա դպրոցներ, վստահ եմ՝ ձեռք սիրով կընդունեն: Համապատասխան դասարաններում մասնակցեք դասերին, որպեսզի հետագայում բացթողնված ուսումնական նյութն ավելի հեշտությամբ լրացնեք», - դիմելով երեխաներին՝ նշել է Ժաննա Անդրեասյանը՝ հավելելով, որ կրթությունը դժվարություններին դիմակայելու և հոգեբանորեն ուժեղ լինելու արդյունավետ միջոցներից է:

Ճանապարհի փակման հետևանքով այս պահին Հայաստանում է մնացել արցախցի շուրջ 300 երեխա, որոնց մեծ մասը Հայաստան էին եկել տարբեր ծրագրերի, միջոցառումների և մրցույթների մասնակցելու նպատակով:

Կրթական ծրագրին մասնակցելու նպատակով «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի շրջանակում Արցախում անգլերեն և հասարակագիտություն դասավանդող երկու ուսուցիչները ևս մնացել են Գորիսում: Աշոտ Գաբրիելյանը նրանցից մեկն է. աշխատում է Արցախի Մարտունու շրջանի Կոլխոզաշեն գյուղում: Նա պատմում է, որ Արցախից դուրս են եկել դեկտեմբերի 11-ին՝ միջազգային ծրագրին մասնակցելու նպատակով. «Այստեղ գտնվող երեխաների համար կազմակերպել ենք անգլերենի և հայերենի խմբակներ, ինչպես նաև տարբեր ժամանցային խաղեր, որպեսզի կարողանանք մի փոքր շեղել երեխաներին ստեղծված իրավիճակից»:

Արցախի ԿԳՄՍ նախարարի խորհրդական Աիդա Գյուրջինյանի ղեկավարությամբ Եվրատեսիլին մասնակցելու նպատակով Երևան ժամանած երեխաների խումբը նույնպես արդեն մոտ 10 օր չի կարողանում տուն վերադառնալ:

Մյուս խումբը Երևան էր եկել «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության» կազմակերպած ռոբոտատեխնիկայի մրցույթին մասնակցելու նպատակով:

Գորիսում է գտնվում նաև Ստեփանակերտի «Ասպարեզ» պարային ստուդիայի խումբը, որի ղեկավար Լարի Ավանեսյանի պատմելով՝ վերադառնում են Թբիլիսիում կայացած մրցույթից:

Արցախի Ուշույի ֆեդերացիայի նախագահ Դավիթ Գրիգորյանը երկու մարզիկների հետ դեկտեմբերի 1-ից դուրս է եկել Արցախից: Նրանք Հայաստանի հավաքականի կազմում մասնակցել են Ինդոնեզիայում տեղի ունեցած պատանիների և երիտասարդների աշխարհի առաջնությանը, որտեղ արցախցի մարզիկ Արթուր Վարդանյանը նվաճել է բրոնզե մեդալ: Մրցաշարն ավարտվել է դեկտեմբերի 11-ին, և մարզիչն ու մարզիկներն այժմ Գորիսում սպասում են ճանապարհի բացմանը:

Հանդիպման ընթացքում երեխաներն ու նրանց ուղեկցող մեծահասակները նշել են, որ չեն նահանջելու և ընկրկելու դժվարություններից. բոլորի միակ ցանկությունը տուն վերադառնալն է:

Լրագրողների հետ զրույցում ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, որ նախարարությունը մշտական կապի մեջ է Մյունիխի մարզպետարանի հետ. կատարվել է կարիքների գնահատում՝ խնդիրներին լուծում տալու նպատակով: Հայաստանում գտնվող երեխաների մի մասը հաճախում է Գորիսի դպրոցներ, որոշներն էլ հոգեբանորեն պատրաստ չեն և սպասում են, որ ճանապարհն օր առաջ բացվի, և վերադառնան Արցախ:

Ժաննա Անդրեասյանի տեղեկացմամբ՝ Արցախի երեխաների կրթության իրավունքի խախտման հարցով ԿԳՄՍ նախարարությունը դիմել է նաև միջազգային կառույցներին՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի գլխավոր քարտուղարին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարին:

Նախարարն այցելել է նաև Գորիսի թիվ 1 ավագ դպրոց, որը նոր է վերակառուցվել և Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջ, որտեղ այժմ ընթանում են շինարարական աշխատանքներ:

Աղբյուրը՝ <https://www.armtimes.com/hy/article/250327>

16.12.2022 թ.

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԹԵԺ ԳԻԾԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԳՈՐԾԵԼ

Սյունիքի մարզպետարանում շարունակում է գործել Հայաստան-Արցախ ավտոճանապարհի փակ լինելու հետևանքով առաջացող խնդիրների լուծման նպատակով ստեղծված օպերատիվ շտաբը:

Մինչ այս պահը նրա թեժ գծի հեռախոսահամարին (093 25 08 08) արցախցիներից մոտ 300 զանգ է ստացվել:

Զանգերը մեծ մասամբ վերաբերել են ճանապարհը շարունակել չկարողացող ուղևորների կեցության ու սննդի հարցերին: Զանգերի միջոցով քաղաքացիները նաև պարբերաբար տեղեկություններ են հարցնում ճանապարհի բացվելու մասին:

Մարզպետարանը լուծում է տվել բոլոր այն մարդկանց խնդիրներին, որոնք դիմել են կեցության, սննդի, նաև առողջապահական խնդիրներով՝ (բուժօգնություն, դեղորայք և այլն):

Հիշեցնենք, որ թեժ գիծը գործում է շուրջօրյա. ճանապարհին մնացած ուղևորներն ու վարորդները կարող են զանգահարել առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների և հրատապ հարցերի դեպքում:

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/12/16/I_gitutyun/

13.12.2022 թ.

ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղը կգլխավորի Լեռնիկ Պետրոսյանը

Դեկտեմբերի 13-ին Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) ռեկտոր Գոռ Վարդանյանը բուհի Կապանի մասնաճյուղում աշխատակազմին ներկայացրեց մասնաճյուղի տնօրենի նորանշանակ պաշտոնակատար Լեռնիկ Պետրոսյանին:

Պաշտոնակալության արարողությանը մասնակցում էին Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Դանիելյանը, ռեկտորի տեղակալ Կարապետ Թոռյանը, մասնաճյուղի տնօրենի արդեն նախկին պաշտոնակատար Արթուր Կոստանոյանը:

Բացման խոսքում Գոռ Վարդանյանը նախ շնորհակալություն հայտնեց Արթուր Կոստանոյանին՝ Կապանի մասնաճյուղում վեցամյա գործունեության և մայր բուհի հետ համագործակցության համար, այնուհետև ներկայացրեց մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեռնիկ Պետրոսյանին՝ որպես մասնաճյուղի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: Բանախոսը կարևորեց մարզում կրթական այնպիսի միջավայրի ստեղծումը, որ երիտասարդը նախընտրի ինժեներական կրթություն ստանալ Սյունիքում,

այլ ոչ թե մայրաքաղաքում, ասել է թե՛ բարձրագույն կրթություն ստանալու ապագան տեսնի իր մարզում, հայրենի քաղաքում:

Շնորհակալություն հայտնելով վստահության համար՝ Լեոնիկ Պետրոսյանը ընդգծեց այն միտքը, որ մայրաքաղաքում կրթություն ստացած սյունեցիների 90 տոկոսը հետ չի վերադառնում հայրենի բնօրրան: Եվ համոզմունք հայտնեց, որ գործընկեր կազմակերպությունների և մայր բուհի հետ համագործակցելով, հետևողականորեն կկատարեն մասնաճյուղին վերապահված առաքելությունը: Մանավանդ, որ այդ առաքելությունն իր մեջ ռազմավարական շեշտեր է պարունակում: Բանախոսը նաև ներկաների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ բնագիտական առարկաների դրվածքը հանրակրթական դպրոցներում հեռու է բավարար լինելուց:

Կապանի ինստիտուտի նորանշանակ ղեկավարին բարեմաղթանքներ հղեց նաև ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Դանիելյանը:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/haph-kapani-masnachyukhy-kglkhavori-lernik-petrosyany>

12.12.2022 թ.

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը ղեկտեմբերի 12-ին «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի պատասխանատուների հետ քննարկել է «Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման բարելավում» ծրագիրը, որը մեկնարկել է վերջրես՝ ԱՄՆ ՄԶԳ (USAID) ֆինանսավորմամբ ու իրականացվում է «Դելոյթ Քնսայթինգ»-ի (ԱՄՆ) և «Ուրբան» հիմադրամի կողմից:

Դիտարկվել են մարզի բնակավայրերում առկա՝ ջրային ռեսուրսների հասանելիության ու բաշխման հետ կապված խնդիրներ, ինչպես նաև՝ ծրագրում ընդգրկվելու համար մարզի համայնքներից ստացված նախնական հայտերը:

Աղբյուրը՝ <http://syunik.mtad.am/news/item/2022/12/12/handipum/>

12.12.2022 թ.

«Որոտան» միջազգային փորձագիտական ֆորում Գորիսում

Ս. թ. նոյեմբերի 9-11-ը Սյունիքի Գորիս քաղաքում անցկացվել է «Որոտան» միջազգային փորձագիտական ֆորումը: Ֆորումի հայաստանյան համակազմակերպիչներից է «Հայկական նախագիծ» գիտակրթական ՀԿ-ն: Որպես միջազգային գործընկերներ մասնակցել են «Մշակույթ և ապագա» հիմնադրամը (ՌԴ), Ալեքսանդր Գորչակովի անվան հանրային դիվանագիտության աջակցության հիմնադրամը, Ժամանակակից միջազգային գործընթացների հետազոտության վերլուծական հարթակը, ինչպես նաև .RU/.PФ դոմեյնների կոորդինացիոն կենտրոնը:

«Որոտան» ֆորումը նվիրված է եղել արդի եվրասիական, մեծմերձավորարևելյան և հնդկաչինական տարածաշրջաններում ինտեգրացիոն գործընթացներին, միջազգային հաղորդակցային ուղիներին, տեղեկատվական անվտանգությանը, ինքնիշխան համացանցին, ինչպես նաև եվրասիական տարածքի տնտեսաքաղաքական հեռանկարներին

առնչվող հարցերին: Ֆորումն ունեցել է երեք հիմնական բաժին՝ «Հաղորդակցություններ և միջանցքներ», «Տեղեկատվական անվտանգությունը մեր օրերում», «Արևմտյան պատժամիջոցներ. հնարավորություններ և բացասական հետևանքներ եվրասիական տնտեսության համար», որոնց մասնակցել են 21 փորձագետներ Հայաստանից, Ռուսաստանից, Իրանից և Հնդկաստանից: Փորձագետներից զատ՝ ֆորումին ներկա են եղել շուրջ 30 լրագրողներ, ուսանողներ և ակտիվ հասարակայնության ներկայացուցիչներ ինչպես Հայաստանի տարբեր վայրերից, այդ թվում՝ Արցախից, այնպես էլ՝ Ռուսաստանից: Ֆորումի անցկացման վայրն ընտրվել է՝ հաշվի առնելով, որ ներկայում Սյունիքը ոչ միայն Հայաստանի ազգային-քաղաքական կյանքի կիզակետն է, այլև եվրասիական տարածքի ամենահարավային կետը: Ֆորումի անունն ընտրվել է ի պատիվ Ռոոտան գետի, որ սկիզբ է առնում Արցախի ժամանակավորապես օկուպացված Շահումյանի (Քարվաճառ) շրջանից, հոսում Սյունիքի տարածքով և թափվում դարձյալ ժամանակավորապես օկուպացված Քաշաթաղի շրջան: Ֆորումի հայաստանյան կազմակերպիչ «Հայկական նախագծի» համահիմնադիրները նշում են, որ Արցախյան երրորդ պատերազմից հետո սա Սյունիքում կազմակերպված ամենամեծ միջազգային միջոցառումն է: Հայ և միջազգային փորձագետներն ընդգծել են տնտեսական և քաղաքական առաջընթացի և իրական խաղաղության տեսանկյունից եվրասիական տարածքում ինտեգրացիոն գործընթացների խթանման, ինչպես նաև հյուսիս-հարավ հաղորդակցային ցանցի և դրանում Հայաստանի ներգրավվածության կարևորությունը: Տնտեսագետ Հրանտ Միքայելյանն ընդգծել է, որ թեպետ անուղղակիորեն Հայաստանը տնտեսապես շահում է ռուս-ուկրաինական ճգնաժամից, սակայն տնտեսական այդ էֆեկտը զուտ կարճաժամկետ է, քանզի ՀՀ դե-ֆակտո կառավարության կողմից չեն իրականացվում դրանք երկարաժամկետ զարգացման վերածելու քայլեր: Իրանից ժամանած փորձագետներ Էհսան Մովահեդյանը, Շուայիբ Բահմանը և Ֆարշադ Ադելը մատնանշել են «Զանգեզուրի միջանցք» կոչվող ՆԱՏՕ-ի թուրանական նախագծի վնասաբերությունն ինչպես Հայաստանի, այնպես էլ Իրանի և Ռուսաստանի համար: «Հետաքրքրական է, որ այս միջանցքի կոնցեպտն առաջարկվել է ՆԱՏՕ-ում Բրիտանիայի նախկին ներկայացուցչի կողմից: Տարածաշրջանում ՆԱՏՕ-ի ներկայության արդյունքում մեծ գին կվճարեն Իրանն ու Ռուսաստանը», - նշել է Շ. Բահմանը: Ֆորումին հեռավար մասնակցել են ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյանը, նույն ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոցենտ Վարդան Ոսկանյանը և անկախ փորձագետ Այան Մանչանդան (Հնդկաստան): Ֆորումն ուղեկցվել է հայաստանաճանաչողական ծրագրերով, այդ թվում՝ այցելություն Գորիսում Ակսել Բակունցի տուն-թանգարան, իսկ Վայոց Ձորի մարզում՝ Նորավանքի վանական համալիր: Ֆորումի հայաստանցի և միջազգային մասնակիցները պայմանավորվել են շարունակական դարձնել այս ձևաչափը՝ որպես յուրատեսակ «Գորիսյան հարթակ»՝ դրա շրջանակներում պարբերաբար քննարկելով տարածաշրջանային կարևոր խնդիրները:

Աղբյուրը՝ <https://www.aravot.am/2022/12/12/1310607/>

12.12.2022 թ.

Սահմանապահ Արավուսում օրերով խմելու ջուր չեն ստանում, բայց դա գյուղի բազմաթիվ խնդիրներից միայն մեկն է

Դեկտեմբերի 10-ին մեր ստեղծագործական խումբը Տեղ համայնքի Արավուս գյուղում էր, բնակիչներն էին հրավիրել...

Արավուսը Սյունիքի այն բնակավայրերից է, որ 2020 թ. նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայից հետո հայտնվել է փորձությունների հորձանուտում: Աղբբեջանի հետ յոթ կմ սահման ունեցող գյուղի հողատարածքներից մոտ 80 հեկտարը (արոտավայր, խոտհարք, վարելահող) հայտնվել է թշնամու տիրապետության ներքո: Ընդ որում՝ բռնագավթված տարածքներից 11 հեկտարը սեփականաշնորհված և գյուղացիներին պատկանող հողեր են:

Արավուսն ուրիշ առանձնահատկություն էլ ունի. աղբբեջանական 6-7 հենակետ անմիջապես գյուղի մերձակայքում են, ինչը մտահոգության տեղիք է տալիս:

Արցախյան 3-րդ պատերազմում գյուղը կորցրել է իր լավագույն զավակներից երկուսին՝ Արտուշ Արզումանյանին և Սերոբ Ասրյանին, որոնց անունները մեծագույն երախտագիտությամբ են հիշում համագյուղացիները:

Այդքանով հանդերձ՝ արավուսցիներն ամուր են կանգնած իրենց պապենական հողի վրա: Թուրքի դիրքապահներից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվող բնակավայրից որևէ մեկը հեռանալու մտադրություն չի ունեցել և չունի:

Գյուղացիները տեսնում են սահմանագծում մեր կողմից կատարվող ամրաշինական աշխատանքները: Բայց մարդկանց առավել շատ հուսադրում են գյուղի սահմանների անվտանգությունն ապահովող աշխարհագորայինները, որոնց թվում քիչ չեն տեղացիները:

Գյուղում հանդիպեցինք նրանցից մի քանիսին, ովքեր այդ պահին մարտական հերթապահության մեջ չէին: Նրանցից մեկը՝ Գարիկ Մկրտչյանը, ուշագրավ պատասխան տվեց մեզ, երբ կամեցանք իմանալ աշխարհագորայինների տրամադրության մասին:

- Նահանջելու, փախչելու տեղ չունենք, պետք լինի՝ կյանքի գնով կպաշտպանենք մեր սահմանները,- ասաց Գարիկ Մկրտչյանը, ում հետ ծանոթացել էինք 44-օրյա պատերազմից առաջ՝ Ուխտասարի ժայռապատկերների մոտ. ինքը հիշեցրեց:

Աշխարհագորայինների մասին դրվատանքի խոսքեր լսեցինք նաև Արարատ Աղաբեկյանից, գյուղի մյուս բնակիչներից:

Եվ, այդքանով հանդերձ, անվտանգության խնդիրը գյուղացիների թիվ 1 մտահոգությունն է:

- Աշնանը դաշտերը մի կերպ մշակել ենք՝ թուրքի դիրքապահների հայացքի ներքո, այդպես է լինելու նաև բերքահավաքի ժամանակ,- պատմում է Արարատ Աղաբեկյանը:

Ձմեռվա այս օրերին, սակայն, արավուսցիներին մտահոգում է մեկ այլ խնդիր նույնպես. դեկտեմբերի 7-9-ը գյուղում ամբողջապես ընդհատված էր խմելու ջրի մատակարարումը: Գուցե դա բացառության պես մի բան համարվեր, եթե... Պարզվում է՝ գյուղի ջրամատակարարումն ընդհատվում է պարբերաբար: Նման իրավիճակն ամռանը բացատրում էին պարզունակ պատճառաբանությամբ՝ իբր ռոտզման ջրի բացակայության հետևանքով խմելու ջուրն օգտագործում են ռոտզման նպատակով, ուստի և չի հերիքում: Իսկ հիմա՝ ձմռանը... Գյուղի վարչական ղեկավար Արթուր Զհանգիրյանը տարօրինակ իրավիճակ է ներկայացնում՝ «Վեռլիա ջուր» ՓԲ ընկերության տարածքային կառույցի պատասխանատուներից որևէ մեկին զանգահարել գրեթե հնարավոր չէ, իսկ եթե պատահամաբ ինչ-որ մեկը վերցնում է հեռախոսափողը, ապա պատասխանատվությունը

զգում է մեկ ուրիշի վրա, իսկ երբ այդ մեկ ուրիշին ենք գտնում, նա էլ երրորդ մարդու անունն է տալիս: Եվ այդպես շարունակ: Ու խնդիրը չի լուծվում...

- Նաղդալի ձորի աղբյուրից են մարդիկ ջուր բերում՝ ձիով, էշով, քանի որ պոմպերի անսարքության պատճառով այնտեղից էլ ջուր մղելը մի քանի օրով խափանվել է,- ասում են գյուղացիները:

Բայց, որքանով հասկացանք, ձորի բնական աղբյուրից ջրի մեխանիկական մղումը կվերականգնվի. ժամում մեկ տոննա ջուր, որն էլ հավաքվում է կարգավորիչ ջրամբարում և մատակարարվում, ինչը, իհարկե, չարյաց փոքրագույնն է:

Իսկ ջրամատակարարման պարբերական ընդհատումների հետևանքով...

- Համաշխարհային բանկի 2021-ի ֆինանսավորմամբ գյուղի 33 տան վրա տեղադրվել է արևային ջրատաքացուցիչ, ու ջուր չլինելու պատճառով դրանց փչանալու հավանականությունն այս օրերին մեծացել է,- ասում է Տեղ համայնքի ավագանու անդամ Հայրապետ Հայրապետյանը և շարունակում՝ «190 քառակուսի մետր մակերեսով ջերմոց եմ պատրաստել, ծախսեր արել, բայց աճեցվող բանջարեղենը փչացել է՝ ջուր չլինելու պատճառով»:

Գյուղացիներից մեկ ուրիշն էլ թե՛ «Ձմռան այս օրերին ջուրը կտրելով՝ մետաղապլաստիկ խողովակներն են պայթում կամ ճաքում՝ ներսում սառած ջրի պատճառով, և ստիպված ենք նոր ծախսեր անել ու նոր խողովակներ ձեռք բերել»:

Ջրի խայտառակ մատակարարման խնդրով մտահոգ են նաև աշխարհագրայինները:

- Օրեր շարունակ հերթապահում ենք դիրքերում, և երբ վերադառնում ենք տուն՝ անհնար է լինում նույնիսկ բաղնիքից օգտվելը,- ասում է աշխարհագրայինը:

Ջրի խնդիրը ծանր անդրադարձեր է ունենում անասնապահության վրա, իսկ անասնապահությունը, կարելի է ասել, գյուղացիների հիմնական զբաղմունքն է:

Մի խոսքով՝ Արավուսում ընթացիկ պահի գլխավոր հարցը կանոնավոր ջրամատակարարման ապահովումն է...

Ո՞վ կկարողանա լուծել այդ հարցը: Ամռանը, օրինակ, մի անգամ խնդիրը կարգավորել էր Մարդու իրավունքների պաշտպանը, իսկ հիմա...

Ցավոք, խմելու ջրի անկանոն մատակարարումն արավուցիներին մտահոգող հարցերից մեկն է միայն:

Մարդիկ նաև անձնական բնույթի խնդիրներ ունեն, որոնք տարիներ շարունակ չեն լուծվում, ինչը խաթարում է բնակիչների բնականոն կյանքը:

Գրենա Քոչարյանն Արցախյան առաջին, նաև 2016 թ. քառօրյա պատերազմի ակտիվ մասնակից է, 44-օրյա պատերազմի օրերին էլ գյուղի մերձակա դիրքերում էր...

Գրենա Քոչարյանն Արցախյան առաջին պատերազմի ժամանակ ծանր վիրավորվել է գլխից: Եվ մոտ 15 տարի հաշմանդամության թոշակ է ստացել: Սակայն 2018-ի մարտ-ապրիլից թոշակը կտրել են, չի էլ իմանում՝ ինչու: Եվ չորս տարի շարունակ թղթեր է հավաքում՝ իր իրավունքները պաշտպանելու համար, հիմա էլ դատարան է դիմել...

- Վարորդական իրավունքից էլ են զրկել, նաև աշխատանք չեն տալիս, ասում են՝ գլխից վիրավորվելու հետևանքով հոգեբուժարանում հաշվառված ես, և բազմանդամ ընտանիքս կնոջս ստացած 33 հազար դրամով է ապրում,- իր վիճակն այդպես է բացատրում Գրենա

Քոչարյանն ու հավելում՝ «Ընդամենը գոյությունս պահել եմ ուզում, ի՞նչ անել, ո՞ւմ դիմել, անասուն պահելն էլ դժվարացել է՝ արոտների պատճառով, ջրի պատճառով»:

Արավուսում մեկ ուրիշ խնդրի էլ առնչվեցինք, որ ներկայացրեց Գևորգ Ջհանգիրյանը:

- 1992-ից երկու ընտանիքով բնակվում ենք խորհրդային տարիներին գյուղապետարանի համար կառուցված վարչական շենքում, որը համայնքային սեփականություն է, 30 տարի շարունակ փորձում ենք փաստաթղթավորել մեր կարգավիճակը, իրավունքի խնդիր լուծել, բայց չի հաջողվում, տասնյակ դիմումներ և գրո արդյունք, հիմա նույնիսկ գազամատակարարումից չենք կարող օգտվել:

Արավուսի հոգսերը, սակայն, դրանով չեն ավարտվում:

Տեղ գյուղից Արավուս ձգվող 2.5 կմ երկարությամբ ճանապարհի վիճակն է անմխիթար:

86-ամյա Նուրուս Ջհանգիրյանի համար էլ, անվտանգության խնդրից հետո, Արավուսի ամենամեծ ցավը գյուղի հասարակության պառակտվածությունն է երկու մասի: Նաև չի հաշտվում իրողության հետ, որ գյուղից բռնազավթված մոտ 80 հա հողատարածքների վրա թշնամին ամրաշինական աշխատանքներ է կատարում:

Նուրուս Ջհանգիրյանը մեծագույն սխալ է համարում սահմանամերձ բնակավայրերի խոշորացումը, որից ոչ մի գյուղ չի շահել:

Նա ձևականություն է տեսնում սահմանամերձ գյուղերի հանդեպ վերաբերմունքում՝ «Բոլորը գալիս են, անգամ դեսպանները, զրուցում մարդկանց հետ, նկարում և նկարահանվում, բայց ոչ մի արդյունք... Իսկ ի՞նչ է մեր ուզածը՝ այսքանից հետո գոնե եղածը չկորցնենք»:

Եվ, նման խնդիրներով ծանրաբեռ Արավուսը, հավատացեք, կարողանում է արժանապատվորեն առերեսվել իրականությանը, առկա սպառնալիքներին ու մարտահրավերներին դիմակայել ստեղծարար աշխատանքով:

Այդ առումով ոգևորող է հասկապես Արմեն Ջհանգիրյան ֆերմեր-երևույթը...

38 տարեկան արավուսցին մինչև պատերազմ 300 խոշոր եղջերավոր անասուն ուներ, հազար գլուխ մայր ոչխար, 20 գլուխ ձի... Պատերազմից հետո մնացել է 100 գլուխ խոշոր (որից 80-ը՝ կթու կով), 300 գլուխ մայր ոչխար: Եվ դրանց խնամքն իրականացնում է բացառապես ընտանիքի անդամներով:

Դեռևս 2020-ին (մինչև պատերազմ) անասնագույն է կառուցել, կովերի կիթն է մեքենայացրել: Ֆերման համալրված է կաթնատու կովերով, դժգոհ չէ «Էլուլա» ընկերությանը վաճառվող կաթի գնից՝ լիտրը 200 դրամ:

Դժգոհ է արոտավայրերի հարցում 2020-ի պատերազմից հետո իրենց գյուղի մերձակայքում ստեղծված վիճակից, բայց և գոհ է, որ ընթացիկ տարում անասնակերը (անցյալ տարվա համեմատ) էժանացել է:

2022-ի սեպտեմբերի 13-15-ի եռօրյա պատերազմի ժամանակ նրա ֆերման Գորհայքի ամառային յայլաղներում էր՝ Գոթուրում, 13 գլուխ խոշորի կորուստ է ունեցել, թուրքերն են գողացել:

Մեր հարցին՝ արդյո՞ք ոիսկային չէ վտանգներով լեցուն մեր օրերում՝ սահմանապահ դարձած Արավուսում այդքան անասուն պահելը, Արմեն Ջհանգիրյանը պատասխանեց՝ «Նաև այսպես՝ ստեղծարար աշխատանքով, սահմանային գյուղի կյանքը

կազմակերպելով պիտի դիմակայենք թշնամուն, նաև այսպես պիտի արձագանքենք սպառնալիքներին»:

Արավուսում հաճելի էր լսել գյուղի վարչական ղեկավարի պաշտոնը զբաղեցնող Արթուր Ջհանգիրյանի մասին մարդկանց դրվատական խոսքերը: Անժելա Քոչարյանը, օրինակ, նրան այսպես բնութագրեց՝ «Խելոք, գյուղին նվիրված երիտասարդ, գյուղի խնդիրների լուծման համար ջանքեր գործադրող պաշտոնյա»:

Իսկ Արթուր Ջհանգիրյանը, ով 2021-ի հոկտեմբերից է կատարում գյուղի վարչական ղեկավարի պարտականությունները, այսպես է ներկայացնում գյուղը՝ «33 ընտանիք ենք, 144 բնակիչ (գրանցված է 180 հոգի): Դպրոցը տարրական է, տասը երեխա է հաճախում, մյուս 17 երեխաները հաճախում են Տեղ գյուղի դպրոց, նրանք Արավուսից տեղ են հասնում և վերադառնում համայնքապետարանի մեքենայով, դրանով նաև գյուղի տասը փոքրիկներն են հասնում Տեղի մանկապարտեզ: 2023-ին նախագծված է գյուղում կառուցել մանկապարտեզ և խաղահրապարակ»:

Արթուր Ջհանգիրյանը հավաստիացնում է՝ և՛ ինքը, և՛ համայնքի ղեկավար Դավիթ Ղուլունցը ձեռնարկում են հնարավոր բոլոր քայլերը՝ գյուղի առջև ծառայած դժվարին խնդիրները լուծելու համար, իսկ Արավուսի հիմնախնդիրների թվում դարձյալ նշում է ջրամատակարարման անբավարար վիճակը, ճանապարհի վիճակը, երիտասարդության զբաղվածության պրոբլեմը և, իհարկե, համերաշխության վերականգնման հրամայականը:

Անվտանգության տեսակետից սահմանապահ գյուղի վիճակը բավարար է համարում վարչական ղեկավարը. «Մարդիկ ապրում են իրենց բնականոն կյանքով, սակայն մտահոգված են ընդհանուր իրավիճակով, ամբողջ գյուղով ենք պատրաստ պաշտպանելու մեր հայրենի եզերքը...»:

Հ.Գ.

Մեր այցելության վերջում եղանք գյուղի պաշտպանական դիրքերից մեկում, որտեղ ստացած գոտեպնդող տպավորությունները, սակայն, թղթին չհանձնեցինք՝ թույլտվություն չունենալու պատճառով:

Այնուհետև հյուրընկալվեցինք մեր մարտական դիրքից մոտ 100 մետր հեռավորության վրա գտնվող, աղբբեջանական մի քանի հենակետից դիտարկվող Գրենա Քոչարյանի տանը:

Թեև ունեցած խնդիրներին, ինչին անդրադարձանք վերևում, նա ժամանակին վերցրել է տնտեսության գոմերից մեկը և մեծ բնակարանի վերածել, սակայն չի կարողանում վարկ վերցնել ու տան վերակառուցումն ավարտին հասցնել:

Մեր այցելության օրն ուրախության, ավելի ճիշտ տոնական տրամադրության մեջ էր Գրենա Քոչարյանի մեծ և հարգելի ընտանիքը: Որդին՝ Թորոսը, օրեր առաջ էր Գորիսից աղջիկ փախցրել, և ժամեր հետո նորահարսի ծնողները պետք է այցելեին խնամիացած Գրենայի տուն...

Ի դեպ, նորափեսա Թորոսն իր անունը ստացել է Մելիքսեթ Պողոսյանի փառապանծ ջոկատի կողմից Արցախյան առաջին պատերազմի ժամանակ ազատագրված Թուրուսի խութի անվանումից: Գրենա Քոչարյանը ժամանակին այնքան էր ոգևորված իրենց ջոկատի ռազմական այդ հաջողությամբ, որ որդուն կնքեց հենց այդ անունով...

Իսկ մենք չսպասեցինք խնամիների այցելությանը և բաժակ բարձրացրինք Թորոսի նորաստեղծ ընտանիքի համար, Գրենա Քոչարյան ազատամարտիկի առողջության համար...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/sahmanapah-aravusum-orerov-khmelu-jur-chen-stanumbayts-da-gyukhi-bazmativ-khndirnerits-miayn-mekn-e>

12.12.2022 թ.

Այսօր ժամը 7-ին այսպիսի վիճակ էր Սատանի կամուրջ-Տաթև ճանապարհահատվածում

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը կատարեց իր խոստումը, և շաբաթ երեկոյան վերականգնվեց երթևեկությունը Կապան-Տաթև-Հալիձոր-Շինուհայր-Մ2 մայրուղով: Տաթևի արևելյան մուտքում՝ մոտ 200 մ երկարությամբ սողանքային-գրունտային հատվածում, ճանապարհը վերաշինվել-ասֆալտապատվել էր...

Մակայն այսօր առավոտյան նորից արգելափակված էր երթևեկությունը մայրուղու Տաթև-Սատանի կամուրջ հատվածում:

Տեղում հերթապահող ոստիկանության կապիտանը մեզ տեղեկացրեց, որ այս իրավիճակը ստեղծվել է մոտ 12 ժամ առաջ՝ կիրակի երեկոյան, ու մինչև հիմա ոլորաններից մեկում վթարված բեռնատարը դուրս չի բերվում ճանապարհի երթևեկելի մասից:

Առավոտյան շուտ ամբարձիչ կռունկն արդեն տեղ էր հասել, և փորձում էին ճանապարհն ամբողջովին վերաբացել...

Ստեղծված իրավիճակը ևս մեկ առիթ է պատկան մարմինների ուշադրությունը հրավիրելու Կապան-Տաթև-Մ2 մայրուղու կանոնավոր շահագործման չափազանց կարևոր հանգամանքի վրա:

Անշուշտ, վթարներ միշտ էլ կլինեն, դրանցից խուսափել (ցավոք) հնարավոր չէ, և դա խոսակցության այլ թեմա է...

Խնդիրն այն է, որ նման վթարների պատճառով մայրուղու արգելափակված վիճակի շտկումը ժամեր է տևում: Եվ ոչ թե այն պատճառով, որ դժվար է հետևանքները վերացնել, այլ այն պատճառով, որ դրա համար պատասխանատու կազմակերպությունները կամ պաշտոնյաները տեղում չեն:

Եվ ողջամիտ հարց է ծագում՝ Սյունիքի մարզում կա՞ մի պաշտոնյա կամ կազմակերպություն, որ պարտավոր է նման իրավիճակներում գործի գլխին կանգնել և նման կրիտիկական իրավիճակները հնարավորինս արագ շտկել:

Հ.Գ.

Եվ նորից անպատասխան մնաց մեր հարցը՝ ո՞ր կազմակերպությունն է ֆինանսավորվել միջազգային նշանակության այս մայրուղու ձմեռային շահագործումն իրականացնելու համար:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/ayzor-zhamy-7-in-ayspisi-vichak-er-satani-kamurj-tatev-chanaparhahatvatsum>

07.12.2022 թ.

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱԿ-Ի ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը դեկտեմբերի 6-ին ընդունեց ՀՀ-ում ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (UNHCR Armenia/ՄԱԿ ՓԳՀ) ներկայացուցչի ժամանակավոր պաշտոնակատար Ալմազ Բուրկուտովին և

կազմակերպության այլ աշխատակիցների: Հանդիպմանը ներկա էին նաև ՄԱԿ-ի փախստականների գործակալության արտակարգ իրավիճակների պարտրաստվածության հարցերով ավագ համակարգող Բարբ Վիզլին, նաև՝ ներկայացուցիչ «UNICEF Հայաստան»-ից:

Հյուրերը ներկայացրեցին կազմակերպության գործունեությունն ու ընթացիկ աշխատանքները:

Այնուհետև հետաքրքրվեցին սույն թվականի սեպտեմբերի 13-14-ի պատերազմական գործողությունների հետևանքով մարզում ստեղծված իրավիճակով, սահմանային ու վնաս կրած բնակավայրերում մարդկանց կարիքներով, տեղահանված անձանց վերադարձի պատկերով և այլ հարցերով:

Ռոբերտ Ղուկասյանը ներկայացրեց այն խնդիրները, որոնց առերեսվում են տուժած բնակավայրերն ու առհասարակ մարզը հետպատերազմական իրավիճակում: Մարզպետը նշեց գյուղատնտեսությամբ զբաղվելու անհնարինության պայմաններում սահմանային գյուղերում տնտեսության վերակազմավորման անհրաժեշտության մասին, ներկաների հետ քննարկեց առողջապահական, կոմունիկացիոն, մարդկանց անվտանգությանն առնչվող ու այլ հարցեր:

ՄԱԿ ՓԳՀ-ի ներկայացուցիչները նաև ցանկացան տեղեկանալ, թե որքանով են մարզի բնակավայրերը պատրաստ արտակարգ իրավիճակներին, ու այս համատեքստում ինչով կարող է կազմակերպությունն աջակցել մարզին:

Պատասխանելով նշված հարցերին՝ մարզպետը շնորհակալություն հայտնեց ՀՀ-ում ՄԱԿ ՓԳՀ-ի մարդասիրական գործունեության համար, մասնավորապես բարձր գնահատեց Սյունիքում կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքները և շարունակական ու արդյունավետ համագործակցության պատրաստակամություն հայտնեց:

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/12/07/meeting_UNHCR_0612/

06.12.2022 թ.

Ո՞ր կազմակերպությունն է պատասխանատու Հայիձոր-Սատանի կամուրջ-Տաթև ճանապարհի ձմեռային սպասարկման համար

Հետպատերազմյան երկու տարում, որ նշված ճանապարհը փոխարինում է թուրքերի կողմից օկուպացված Մ-2 մայրուղուն, ձմեռային շահագործման համար պատասխանատուն «Ոսմար» ՄՊ ընկերությունն էր:

Եվ, հանուն ճշմարտության նշենք, վատ չէր սպասարկում (ականջդ կանչի՝ Նելսոն Ոսկանյան)...

Այս տարվա սկզբին փոխվեց «Ոսմար»-ի սեփականատերը, իսկ թե ով է ընկերության ներկայիս տնօրենը կամ պատասխանատուն՝ հայտնի չէ և ոչ էլ հնարավոր է պարզել:

Վերջին օրերին տեղացած թեթև ձյունը, սակայն, լուրջ պրոբլեմներ է ստեղծել նշված ճանապարհահատվածում: Տարբեր տեղերում մեքենաների կուտակումներ են... Մերկասառույցը ռիսկային է դարձրել ճանապարհի նորմալ շահագործումը, թեև այդ մայրուղին Հայաստանն արտաքին աշխարհին կապող տրանսպորտային ամենակարևոր ուղիներից մեկն է, եթե ոչ ամենակարևորը:

Հարց «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ղեկավարներին՝ ո՞ր կազմակերպությունն է պատասխանատու Շինուհայրի խաչմերուկ-Հալիձոր-Տաթև-Քաշունիի խաչմերուկ մայրուղու ձմեռային սպասարկման համար:

Ու մի խնդրանք էլ՝ ճշտեք (եթե կարող եք)՝ ո՞վ է այդ ընկերության տնօրենը ու հարցրեք՝ ի վիճակի՞ է կազմակերպել նշված ճանապարհի ձմեռային սպասարկումը:

Ի դեպ, վերջին օրերին սպասարկման նման խայտառակ վիճակի ականատես եղանք նաև Շինուհայրի խաչմերուկից մինչև Գորիս ու Արցախի միջանցքի սկզբնամաս հասնող ճանապարհահատվածում, ինչպես և Շինուհայրի խաչմերուկից դեպի Երևան ձգվող (Մ-2) մայրուղում (մինչև Սիսիանի տարածաշրջան հասնող հատվածում):

Հ.Գ.

Կից ներկայացվող լուսանկարները, որ արտացոլում են այսօր առավոտյան Հալիձոր-Սատանի կամուրջ ճանապարհին տիրող վիճակը, մեզ է տրամադրել Շինուհայր գյուղի բնակիչ Եգոր Փարսյանը, ով իր սեփական տեխնիկայով մեկ շաբաթ շարունակ օգնում է երթևեկության կանոնակարգմանը:

Մի հանգամանք ևս՝ վերոնշյալ ճանապարհների շահագործման վիճակն ուղղակի անտանելի կլինեք, եթե չլինեին ԱԻՆ-ի Սյունիքի մարզային ծառայության և ՃՈ 2-րդ գումարտակի 6-րդ վաշտի 2-րդ դասակի ողջամիտ գործողությունները (դասակի հրամանատար, ոստիկանության փոխգնդապետ Արմեն Սարգսյան):

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/or-kazmakerputyunn-e-pataskhanatu-halidzor-satani-kamurj-tatev-chanaparhi-dzmerayin-spasarkman-hamar>

05.12.2022 թ.

Երկու երկրների դիվանագիտական հարաբերությունների հաստատման տարեդարձի շրջանակում

2022-ին լրացավ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-րդ տարեդարձը: Այդ հոբելյանին էր նվիրված Կապանի արվեստի պետական քոլեջի Վահագն Ստամբուլցյանի անվան երգեհոնային դահլիճում կազմակերպված ֆոտոցուցահանդեսը և համերգը, որին մասնակցում էին Ռուսաստանի Դաշնության նախագահի աշխատակազմի արտասահմանյան երկրների հետ միջտարածաշրջանային և մշակութային կապերի վարչության պետ Իգոր Մասլովը, Կապանի քաղաքապետ Գևորգ Փարսյանը, պաշտոնատար այլ անձինք:

Համերգային ծրագրով հանդես եկան Վերոնիկա Կոժուխարովան (սաքսոֆոն) և Իրիկո Ինոուեն (երգեհոն): Ռուս և ճապոնացի վիրտուոզ կատարողները երաժշտական մի անկրկնելի երեկո պարզեցին հանդիսականին: Իսկ երկացանկում հանրաճանաչ կոմպոզիտորների ստեղծագործություններ էին՝ Յոհան Սեբաստիան Բախ, Աստոր Պիացոլլա, Ալեքսանդր Սպենդիարով, Միքայել Թարիվերդիև, Առնո Բաբաջանյան և այլն:

«Ինձ շատ դուր եկավ դահլիճի ակուստիկան, այստեղ հանդիսականի անկեղծությունը և անմիջականությունը տեսա: Ինձ համար շատ կարևոր է, որ հանդիսականի սիրտը գերեմ, իսկ հանդիսականը՝ իմ: Բարձրակարգ երաժշտությունը հենց այդ առաքելությունն ունի՝ սրտից սիրտ անցնել: Ճապոնուհու հետ մեր ծրագիրը ներկայացրինք այստեղ, և ուրախ ենք, որ հանդիսականը շատ ջերմ ընդունեց մեր կատարումները: Երկուսիս երախտագիտությունն

եմ հայտնում դահլիճում ներկա գտնվողներին»,- համերգի ավարտից հետո «Մյունյաց երկրին» տպավորությունները ներկայացրեց Վերոնիկա Կոժուխարովան:

Դեկտեմբերի 4-ին օրը սկսվեց Կապանի մշակույթի թանգարանում: Նախ հյուրերը ծանոթացան գեղանկարներին, հետո տեղի ունեցավ «Մոսկվան ոչ միայն քաղաք է» լուսանկարների ցուցահանդեսի բացումը: Թանգարանի՝ ցուցահանդեսին հատկացված հարկաբաժինը երիզող ժապավենը կտրեցին Իգոր Մասլովը և Գևորգ Փարսյանը: Հաջորդ հանգրվանը Կապանի մշակույթի կենտրոնն էր, որտեղ տարածք է հատկացված ռուսական կենտրոն հիմնադրելու համար: Հյուրերը ծանոթացան իրականացվող շիննորոգման աշխատանքներին, այնուհետև եղան Կապանի «Ակումբագրադարանային միավորում» ՀՈԱԿ-ի էլեկտրոնային գրադարանում, ծանոթացան պայմաններին, պատանի ընթերցողները հանդես եկան ասմունքով: Ի դեպ, Մոսկվայի կառավարությունը գրադարանին գրքեր էր նվիրել: Վերջին կանգառը Հունան Ավետիսյան փողոցում «Ռուսական գրքի տուն»-ն էր, որ վերջերս է ավարտուն տեսք ստացել:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/erku-erkrneri-divanagitakan-haraberutyunneri-hastatman-taredardzi-shrjanakum>

04.12.2022 թ.

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԴ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԵՏ

Մյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը դեկտեմբերի 3-ին ընդունել է ՌԴ նախագահի՝ արտասահմանյան երկրների հետ միջտարածաշրջանային և մշակութային կապերի վարչության պետ Իգոր Մասլովի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էին վարչության պետի տեղակալ Ա. Լ. Ռիբակովը, մարդասիրական ծրագրերի համակարգման բաժնի պետ Վ. Վ. Չերնիշովը, այլ ներկայացուցիչներ:

Հանդիպմանը ներկա էին նաև Հայաստանում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը, Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը, «Գեոպրոմայնինգ» ընկերությունների խմբի նախագահ Ռոման Խուդովիլը և ընկերության ղեկավար կազմի անդամներ, Երևանում «Մոսկվայի տուն» կենտրոնի տնօրեն Վահրամ Կարապետյանը:

Այցը ճանաչողական էր ու նպատակ ուներ դիտարկել հետագայում մարզի հետ կրթական, մշակութային, գիտատեխնիկական, միջոցառումային կապերը ամրապնդելու հնարավորությունները:

Զրուցակիցները քննարկել են նշված ոլորտներում համագործակցությանը վերաբերող մի շարք հարցեր՝ կարևորելով մասնագետների ու սովորողների փորձի փոխանակումը, կրթական համատեղ ծրագրերի իրագործումը:

Հանդիպման արդյունքում պայմանավորվածություններ ձեռք բերվեցին հետագա համագործակցության ու երկուստեք ձեռավորվելիք մասնագիտական խմբերի միջոցով միասնական ծրագրեր մշակելու վերաբերյալ:

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/12/04/meeting_RF_officials/

01.12.2022 թ.

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԽՄԿ-Ի ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՏ

Նոյեմբերի 30-ին Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանն ընդունել է Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության ղեկավար Թիերի Ռիբոյին եւ Գորիսի ենթապատվիրակության ներկայացուցիչներին:

Մարզպետը շնորհակալություն է հայտնել Հայաստանում ԿԽՄԿ-ի մարդասիրական գործունեության 30 տարիների, նաեւ մարզային իշխանության հետ սերտ ու համագործակցված աշխատանքի համար: Ռոբերտ Ղուկասյանը կարեւորել է Սյունիքում կազմակերպության ներկայությունն ու նրա իրականացրած ծրագրերի դերը մարզի բնակիչների կյանքում:

2020-ի պատերազմից հետո, ելնելով կարիքներից, կոմիտեն ենթապատվիրակություն հիմնեց նաեւ Գրիսում՝ այսպիսով ավելի մոտ գտնվելով Սյունիքին ու առավել ակտիվորեն իրականացնելով ծրագրեր՝ ուղղված տեղահանված անձանց խնդիրներին, առողջապահական, հումանիտար ոլորտներին եւ այլն:

Թիերի Ռիբոն ամփոփ ներկայացրեց (իրենց ունեցած միջազգային մանդատի շրջանակներում) ՀՀ-ում 30-ամյա աշխատանքի ուղղությունները, նաեւ ապագա գործունեության տեսլականը: Նշվեց, որ Սյունիքում հատկապես ուշադրության կենտրոնում են սահմանային բնակավայրերը, որպեսզի աջակցեն մարդկանց շարունակել ապրել այնտեղ, որտեղ որ հիմա են:

Պարոն Ռիբոն նաեւ ողջունեց մարզային իշխանության նախաձեռնությունը, որը կյանքի կոչվեց վերջերս կայացած աշխատաժողովով՝ համախմբելով Սյունիքում գործող բոլոր միջազգային կառույցներին ու հիմք դնելով այստեղ նրանց համակարգված աշխատանքին:

Ռոբերտ Ղուկասյանը ներկայացրեց տարբեր ոլորտներում այն մարտահրավերները, որոնց բախվում են մարզի բնակիչները 2020-ի, ինչպես նաեւ 2022-ի սեպտեմբերի պատերազմներից հետո:

Հանդիպմանը քննարկվեցին նաեւ ԿԽՄԿ-ի առաքելության շրջանակի մի շարք գործընթացներ, մասնավորապես, անդրադարձ կատարվեց գերիների, անհայտ կորածների ճակատագրին, վերադարձողներին ցուցաբերվող հոգեբանական եւ այլ աջակցությանը:

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/12/01/meeting_Red_Cross/

Կազմող՝ Ս. Ալավերդյան